

ԲՈՒՌՆ ԿՈՒՒՆԵՐ

ԱԶԵՐԻՆԵՐԸ
ԾԱՆՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ
ԿԸ ԿՐԵՆ

Մոնտն ալ (Սեպ. 22) կ'արձագանդէր այն բուռն կռիւներուն, որոնք տեղի կ'ունենան Ղարարաղ, Աղերիներու դանդուածային յարձակումներուն պատճառաւ: 400 մեռեալ ունին Աղրբեջանական ուժերը, 26՝ հայկական ինքնապաշտպանութեան ջոկատները: Ընդհանուր ձեւով, հայկական ուժերը կրցած են ետ մղել աղերի յառաջխաղացումը, մանաւանդ Լաչին, որ ինչպէս երէկ ալ դրեցինք ամէնէն բուռն յարձակումներու ենթակայ է: Ղարարաղի հայկական աղբիւրներու համաձայն, միայն հոս, Աղերիները (100) զինուոր կորսնցուցած են:

Արդէն, առաջին անգամ ըլլալով, նախադաս էլջիպէյ ալ խոստովանած է (ՀԱՊ-ի հեռատեսիլէն հարցազրոյցի մը ընթացքին) որ կռիւները օրական 25-էն 30 միլիոն ռուբլի կը նստին: Ուղած է որ՝ «ռուս, ղաղախ եւ վրացի» շէտեր զրկուին տեղւոյն վրայ, ցաւ յայտնելով որ «Փրանսա, Միացեալ - Նահանգները, Ռուսաստան եւ Ոկրանիա» այսքան քիչ ուշադրութիւն կ'ընծայեն այս կնճիռին:

Ամփոփելով վերջին օրերու պատահարները, ըսենք որ սխալ է այն լուրը, զոր տուած են Բաքուի իշխանութիւնները եւ ըստ որուն 15 դիւղեր զրաւած են: Հակառակ հսկայական ուժերու ետ մղուած են եւ միայն Բերդաշէն, Սօս եւ Մաճկալաշէն (Մարտունիի շրջան) Աղերիները կորսնցուցած են 250 զինուոր եւ փճացած է տասը հրասայլ: Այս նոյն կռիւներուն